ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ԱՄԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
163	Աստրադեզ Բիոքսի	Աստրադեզ Բիոքսի	Ախտահանիչ միջոցն իրենից ներկայացնում է խտանյութ՝ անգույնից մինչև բաց դեղին գույնի, թափանցիկ, թույլ, յուրահատուկ հոտով հեղուկ: Որպես ազդող նյութ՝ պարունակում է 20,0±0,5% ջրածնի պերօքսիդ, պոլիհեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդ (ՊՀՄԳ), ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ (ՉԱՄ), պոլիհեքսմեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ (ՊՀՄԲ), թթուների կոմպլեքս, ՄԱՆ, ֆունկցիոնալ, կայունացնող և հակակոռոզիոն հավելումներ: Միջոցի 1%-ոց ջրային լուծույթի ջրածնային իոնների խտության ցուցանիշը pH = 4,5±1,5: Միջոցի պիտանելիության ժամկետը՝ պահպանման պայմաններին հետևելով և արտադրողի փակ փաթեթավորմամբ՝ 3 տարի է :Միջոցի լուծույթներն օժտված են մանրէասպան ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչները՝ թեստավորված Mycobacterium terrae DSM 43227-ի թեստ-շտամի կուլտուրայի վրա, լեգիոնելոզի, հատուկ վտանգավոր վարակների՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և սիբիրյան խոցի (սպորասպան

			ազդեցություն) հարուցիչների), վիրուսասպան հատկություններով (արտաընդերային հեպատիտների, ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի, ադենովիրուսի, էնտերովիրուսի, ռոտավիրուսի, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), գրիպի, պարագրիպի, հերպեսի, թռչնի A/H5N1 և խոզի H1N1 գրիպի, արտաընդերային և ընդերային հեպատիտի, Կոքսակի, ECHO, Էբոլայի, Զիկայի, Մարբուրգի և այլ հեմոռագիկ տենդերի վիրուսների նկատմամբ և այլն), սնկասպան հատկություններով (այդ թվում կանդիդոզի և տրիխոֆիտիայի հարուցիչների, բորբոսասնկերի նկատմամբ՝ թեստավորված Aspergillus niger թեստ-շտամի կուլտուրայի վրա), սպորասպան հատկություններով և մանրէազերծիչ ազդեցությամբ: Կիրառվում է ցանկացած տեսակի մակերեսների, գույքի, սպասքի, սպիտակեղենի, օդի և այլն, ախտահանման և մաքրման համար: Ինչպես նաև, բժշկական գործիքների, այդ թվում՝ ջերմաանկայունների լվացման, ախտահանման և մանրէազերծման համար; էնդոսկոպերի և նրանց հետ օգտագործվող գործիքների լվացման, բարձր մակարդակի ախտահանման համար: ՈՒՆԻ ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգ: :

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	товарный знак	технические характеристики
163	Астрадез Биокси	Астрадез Биокси	